

չնայող կտորը Հրէականը մի պոռնիկ կին են բերել Գրիստոսի մօտ և ասում են, թէ իրանց հայրերի օրէնքով պոռնիկ կնոջը պէտք է քարկոծել: Աստուածային ուսուցիչը այդ բարբառոս օրէնքը ոչնչացնում է մի հասարակ, հրաշալի խօսքով: Ո՛վ է ձեր մէջ արդարեւ, —ասում է նա, —թող այդ արդարեւ առաջին քարը գցէ: Որքան խոր կերպով էր հասկացված մարդկային բնատրուկները: Ո՛րպիսի գեղեցիկ դաս դասեց ու դասաւարտեց կամեցողների համար: Դատաւորը պիտի հասկանայ դատաւարութիւնը, պիտի հասկանայ հէնց այն պատճառով, որ ինքն էլ նոյնպիսի մարդ է, ունի նոյնպիսի հոգի, նոյնպիսի հակումներ: Դէպի յանցանքները, դէպի վատութիւնը: Եւ ինքը, երկնային վարդապետը, վերաբերվեց այդ պոռնիկ կնոջը իբրեւ մի մարդու, որ հոգի ունի, սիրտ ունի, որին տուած է զգալու հրաշալի ընդունակութիւնը: Նա ցաւակից, գթառատ եղաւ դէպի ընկած մարդը և ազատեց այդ ընկածին, բռնկեց, կենդանացրեց նրան:

Նայեցէք այդ վարդապետի աշակերտին Մատթայի գիւղում: Ո՛րպիսի ցաւալի, վրդովեցուցիչ տարբերութիւն: Ոչ Գրիստոսի օրինակը, որ մարդկութեան մէջ ծնողը նոր մաքի, նոր հասակացողութեան արշալոյսն է, ոչ մեր մարդասեր դասը, ոչ իրաւաբանական գիտութեան արած նուաճումները: Գոյութիւն չունեն Մատթայի դատաւորի համար: Նա այսօր էլ զեկամբարվում է ամբողջային այն բարբառոս հասակացողութեամբ, որ պոռնիկին, ընկած կնոջը քարկոծել էր ուղղում Գրիստոսի առաջ: Ինչու էր, ուրեմն, այնքան երկար ժամանակը անցնում աշխարհի վրայ: Երբ, իզուր այնքան նահատակութիւններ տեղի ունեցան մարդկային իրաւունքի համար: Մեզ համար ամեն ինչ իզուր է անցնում: Եւ այսօր, երբ մենք գնում ենք Պարսկաստանի նման մի դժբախտ երկիր բարեկարգելու ու լաւացնելու, ամենում ենք մեզ հետ մտրակ՝ ծեծելու և մկրատ՝ ծամեր կոտորելու համար:

Գերմանացի կուտորաւորեցէրները Աֆրիկայում ամանջանքների և կեղեքումների են ենթարկում տեղացի վայրենիներին: Լուռ և է քաղաքակիրթ աշխարհ և վրդովում մինչև սրտի խորքը: Ինքնուրու տանջանքների գործիքներից ամբողջ ցուցահանդէս է կազմվում և մարդիկ գնում են տեսնելու այդ խայտառակ գործիքները և իրանց զգուշացնող, նողկանքը յայտնելու: Պարսկաստանը Աֆրիկա չէ, պարսկական կինը զուրկ չէ կամ բուռն չէ: Այնուամենայնիւ մենք ծեծում ենք հայ կնոջը հրապարակով, կտրում ենք նրա մազերը, այսինքն հրապարակով վերցնում ենք նրանց և մինչև գազաթի ծայրը խրում ցեխի մէջ: Մենք էլ կարող ենք ցուցասահանդէս կազմել այդ մորակներից ու մկրատներից: Այո, պէտք է կազմել այդ ցուցահանդէսը, պէտք է այդ գործիքները դատաւարանի, անէծքի և զղումների առարկայ դարձնել: Թէ չէ մեր անկումը սարսափելի կը լինի, թէ չէ մենք պիտի ջնջենք մեր անունը քաղաքակիրթից ազգերի ցանկից:

Ռուսաստանը մարմնական պատիժների վերացումը համարում է իր պատմութեան ամենափայլուն էջերից մէկը: Իսկ մենք դեռ նոր ենք սկսում կանանց ծեծել հրապարակում:

անտի Թիւրքիոյ մէջ մեր վայելած նուիրական իրաւունքներուն ջնջումով: Օսմանեան իշխանութիւնն էր որ ամեն օրէնք և իրաւունք ուսնակոյ ընել տուաւ, մեղաւորութեամբ պատրիարքարանին: Եւ այդ բոլոր զեղծումներուն և ապօրինաւորութիւններուն չնորհիւր կաթողիկոսութեան կոչումը եպիսկոպոսին անձնաւորութիւնը անշուշտ օսմանեան կառավարութեան տաճակի չէ: Մէկ խօսքով, Ս. Սահակ կաթողիկոսը թրքաւէր եկեղեցական մը համարելու պատճառները չեն պակսիր: Կացութեան մարդն է ուրեմն:

Պատասխանը հաստատական պիտի ըլլայ, եթէ նկատողութեան առնենք այն ջերմ համակրանքը զոր Կիլիկիոյ ժողովուրդը կը շաղկէ իր նոր կաթողիկոսին, որուն վրա հաւատքով յուսադիր կը մնայ: Ու այն պարագային մէջ խօսքը Կիլիկիոյ հայուն և իշխանի զինգի տարական անոր կեանքն է, գործին տէրը ինքն է: Կ. Պոլսոյ հայութիւնն ալ առանց վերապահումի կը ձայնակցի Կիլիկիոյ հայութեան: Արտասահմանի հայերն ալ կը ձայնակցեն երկիրը բնակող իրենց եղբայրներուն: Եւ Եւրոպայ, Եգիպտոս, Ամերիկա հրապարակուած թերթերը նոր կաթողիկոսին պարգայէս դարպաս կընեն: Ոչ ոք արտադիր կերպի յիշել անոր սկզբնական մեղքը՝ թրքաւէրութեան ճարձմանը, որուն բարեկարգութեամբ կը ժառանգէ Կիլիկիոյ Աթոռը: Հանրային կարծիքը մըն է ուրեմն որ կը յայտնուի հայ աշխարհին

Մեծում ենք այնպիսի ժամանակ, երբ նոյն իսկ Սահակին կղզում, տաժանակիր, աշխատանքներից այդ հայրենիքում, բոլորովին իրաւունքներից զրկված յանցաւորների բանտում կանայք վաղուց ազատված են մարմնական պատիժներից...

Հարկաւոր են բացատրութիւններ: Ընծակ վարդապետը, անշուշտ, բարի դիտաւորութեամբ է ձեռք զարկել Մատթայի ինկվիզիցիական պատիժներին: Անշուշտ նա ասել է իր մէջ, արեւ մի լաւ պատժեմ, որպէս զի բարոյականութիւնը հաստատվի հայ ընտանիքների մէջ:

Բայց ճշգրտում է պատիժը, փրկում է պատիժը: Ոչ ոք Սահակի բանտերի պատմութիւնը այն է ցոյց տալիս, որ պատիժը սպանում է մարդու մէջ այն ամենը, ինչ գեղ մնում էր յանցանք գործելուց յետոյ: Բանտը, թիարանանքը, հաջորդի մէջ կատարվող տաժանակիր աշխատանքները չեն ուղղում, կրթում մարդկանց, դարձնում անսարակութեան պիտանի անդամներ: Պատիժները թունաւորում են մարդկանց, աւելի մտնոցնում են նրանց անամական դրութեան: Հրապարակով սպանեցէք մարդու մէջ նրա ամբողջ ինքնասիրութիւնը, մարդկային գիտակցութիւնը, պատուի, արժանաւորութեան զգացմունքը, և դուք կը տեսնէք, որ ձեր խաւաքանի ու փայտերի տակից դուրս կը գան այնպիսի մարդիկ, որոնք իմանում են, թէ այլ ևս կորցնելու ոչինչ չունեն, թէ բոլոր անանքը պատուած են և չէ կարող լինել մի դրութիւն, որ աւելի վատ ու անպատեարեկ համարվի: Դառն այն դրութիւնը, որի մէջ արդէն գտնվում է նա: Իսկ այնպիսի դարձուրդի գիտակցութեան հասած մարդը արդէն մի անէծք է, մի ժանտախտ է հասարակութեան մէջ:

Մտրակը բարոյականութիւն ստեղծել չէ կարող: Եւ եթէ մենք, առաջնորդ հանդիսանալով մի դժբախտ ու խաւար ժողովուրդի մէջ, դեռ չը գիտենք, որ մարդ պիտի տեսնենք մեր նմանների մէջ, լինեն դրանք յանցաւորներ թէ մուրացկաններ, կին թէ տղամարդ, —ինչ պիտի կարողանանք անել:

—Ոչինչ, կատարելապէս ոչինչ: Մտնումի ժողովուրդի համար աւելի լաւ կը լինէր չը տեսնել ոչ մի արդարադատութիւն, լաւ տեսնել այդ հին, գաղանակաւ, զղուելի արդարադատութիւնը: Այսպէս է ասում այն, ինչ մենք անումանք ենք մարդ:

Լ.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ի Թ Ի Խ Ն

„Մեղաւորութիւն“, կազմեց Գ. Ղազարեան. Նկարներով. Վաղարշապատ, 1903 թ.

Ժամանակակից մեղաւորական գիտութիւնը չափազանց պարզ է գործնականի մէջ և չափազանց բարդ... տեսականի մէջ: Կան մեղաւորականութեան հաստատութիւններից բաղկացած դատաբանքի լի անթիւ-տնամար խորհուրդներով և կանոններով, որոնք անաբեկում են սկսնակ մեղաւորականի և թուլացնում նրա եռանդը գործի սկզբնաւորութեան ժամանակ: Գործնական մեղաւորականութեան ձեռնարկ

մէջ. իբր գիտող մը իրողութիւնը կարճատեւ գրեմք:

Անշուշտ Ս. Սահակ կաթողիկոսը գոհ կը մնայ, երբ կը տեսնէ թէ ժողովուրդն ալ իր համազումներուն չի հակադասել, ապա թէ ոչ իրեն անհարկին պիտի ըլլար ու և է օգտակար ծառայութիւն մատուցանելու: Ու նշաններ կան թէ թիւրք կառավարութիւնն ալ կիլիկիացիներուն և իրենց կաթողիկոսին հաճելի ըլլաւ տարաւորը կը թուի: Օրինակ՝ Հաճնի եկեղեցիին վերայնորութեան հրամանը տրուել է: Այս արտօնումին կարեւորութիւնը ըմբռնելու համար պէտք է մտնել տեսած ըլլալ այն բանը զժողովուրդը երբ դարձր կամ եկեղեցի չինել կուզէ: Նոյն քանն է եթէ հայ մը զօրանոց կատարանելու ուզէ հայրը համար:

Բայց բարեացակամութեան մեծագոյն ապացոյցը հողային խնդրէ մը կը յուսացուի: Միտի վանքը մեծատարած արտեր ունի, որոնք համազուցեալ Մկրտիչ կաթողիկոսին անունը արձանագրուած են, երբ անձնական սեփականութիւն Այդ հողերը վաճ ֆ էին. այսինքն թէ այն կարգի հողերէն, որոնց սեփականատէրը եթէ ուղղակի ժառանգ, այսինքն գաւառ, չուի, հողը կանցնի այն կրօնական հաստատութեան, որուն վաճ ֆ է: Մկրտիչ կաթողիկոսին մահուամբ այս դժբախտութիւնը կը պատահի վանքի պատկան հողերուն: Ու Կիլիկիոյ

կաթողի չնորհը պէտք է երկայ նրանում, որ նա տեսնուի մէջ կանգ առնէ միայն այն կէտերի վրա, որոնք գործնականի մէջ խոշոր հետեւանքներ են ունենում, որ աշխատէ իր կազմած ձեռնարկը դարձնել պարզ, դիւրեմարեւելի և չը բարդէ նրա մէջ կանոն կանոնի վրա, առաւել ևս սխալ սխալի վրա: Վերջինս արդէն աններելի է, որովհետեւ նոյն իսկ մի սխալ խորհրդով կարելի է անագին վնասներ պատճառել անխորձ մեղաւորականներին:

Թիֆլիսի հայ գրավաճառների վկայութեամբ՝ մեղաւորականութեան դատաբանքի պահանջը մեղաւորականութեան է: Ծանոթով պէտք է ասենք, որ Գ. Ղազարեան չէ կարողացել իր կազմած «Մեղաւորականութեամբ» բաւարարութիւն տալ այդ պահանջին:

Նրա «Մեղաւորականութիւնը» ուսուցնէ համապատասխան դատաբանքից մաս առ մաս գուրա քաղաքած հատուածներ և ինքնուրոյն, ըստ մեծի մասին, աւելորդ և սխալ յանգումներ մի կ'օգտագործուի: Միայն... կան դատաւոր սխալներ, կան մեծ սխալներ, որոնք չը պէտք է լինեն ոչ մի դատաբանքի մէջ և կան փոքր, աննշան սխալներ, որոնք կարելի է հանդիպել ամեն մի, նոյն իսկ լաւագոյն դատաբանքի մէջ: Գ. Ղազարեանի դատաբանքի մէջ կան այնպիսի սխալներ, որոնք միանգամայն կարող են քանդել մեղաւորականի տունը:

Թիֆլիսի օրինակ Գ. Ղազարեանի «Մեղաւորականութեան» 195-րդ երեսում կարգում ենք. «Բարեկամաւորութեան» առաջին անգամը: Գիւլիսաւոր աւարը վերջ տն աւարը 2—3 շաբաթ յետոյ պէտք է հոգա տանել, որ զօրեղ ընտանիքը հետզհետէ պակասեցնէ իր բազմամարդ Այս նպատակով սովորաբար մօրը ցանկապատում են փեթակի մի որ և է անկրկնում երեւի, երեք չըլանակներ վրա. այդ ցանկապատի անցքերի միջով բանուոր մեղաւորները կարողանում են անցնել, իսկ մայրը ոչ: Գ. Ղազարեանի այս խորհրդին հետեւող 5—6 շաբաթից յետոյ կը գտնէ իր փեթակը... դատարկ—մայր—մեղաւոր բանտարկուած է, չէ կարողանում ձու գնել, ուրեմն նոր մեղուներ չեն դուրս գալիս, հենք արագութեամբ ոչնչանում են և փեթակը թուլանում է այնքան, որ նրա կորուստը անխուսափելի է: Ընդհակառակը, չափազանց զնահատելի են այն մեղաւորներ, որոնք ծնվում են զգիտաւոր աւար վերջանալուց յետոյ, որովհետեւ նրանք պէտք է ձմերեն և սերունդ մեծացնեն հետեւալ տարվայ համար: Վերջապէս այդ միջոցին դիմելու ամենին կարելի չը կայ, որովհետեւ զգիտաւոր աւարը վերջանալուց անմիջապէս յետոյ՝ մայրը ինքն սկսում է նուազեցնել ձեւերի քանակութիւնը (և ոչ իսպառ դադարեցնել, ինչպէս այդ կը պատահի նրա բանտարկված ժամանակ) և յարմարվել չըլանայ ընտելեան վիճակին:

Գ. Ղազարեանի այս կոպիտ և չափազանց վնասակար սխալը առաջացել է նրանից, որ նա չէ հասկացել Потёхнѣ-ի դատաբանքի այն տեղը, որտեղ խօսվում է այդ մասին: Գ. Ղազարեանի առաջարկած միջոցը խորհուրդ են տալիս գործ դնել այլ նպատակով և այլ ժամանակ, զգիտաւոր աւարի ժամանակ:

կաթողիկոսութեան եկամուտի աղբիւրները այդ հողերն են: Հողերը գրաւելու պաշտօնական գործողութիւնները օրինապէս սկսուած էին, բայց սուլթանին կողմէն տրուած հրաման մը ինչպիսիք առ այժմ առկա կը թողուի: Կը յուսացուի որ ի նպատակ հայ վանքին որոշում մը տրուի:

Կրնաք ենթադրել թէ այսպիսի նիւթական գործ մը ինչքան մեծ ազդեցութիւն կընէ կաթողիկոսին ու ժողովուրդի վրա: Ու դեռ սրբաւոր մասն ու խոշոր շահեր, ամէնքն ալ ազգային, պիտի կրնան զոհուիլ, եթէ Կիլիկիոյ մէջ կառավարական տրամադրութիւնները հայոց դէմ չափազանցօրէն թշնամական երեւին: Անշուշտ այս կացութիւնը ըմբռնելով է որ նոյն իսկ արտասահմանի հայերն կը զգուշանան Սահակ կաթողիկոսին առջեւ դժուարութիւններ յարուցանելու: Ու քիչ ատենէն Աղբիւրանդերիոյ «Ջէյթունի» բարեօրոյց ընկերութիւնը նորութիւններ պիտի յայտնէ, երբ իր ծրագիրը գործադրուի ձեռնարկէ:

Սպասելով որ այս նորութիւնները հետզհետէ երևան գան առաւելանաբար, մեզի համար փափաքելի էր որ Ռուսիոյ հայերը ուշադիր հետեւին Կիլիկիան գործերուն, որոնք Թիւրքիոյ հայոց մտածելու եղանակն են: Մէջ փոփոխութիւն մը ցոյց պիտի տան: Ու ընդունելու ենք որ «Մշակ» այդ փոփոխութիւնը առաջ բերելու մեծապէս կ'օգնէ այն շահագրգռեալ տեսու-

Բայց մայր-մեղուի բանտարկութիւնը, երբ էլ որ լինի և ինչ նպատակով էլ որ լինի, անմիտ միջոց է և նոյն իսկ Պատեխին ասում է այդ մասին, բայց վերջին ժամանակ փորձը ցոյց տուեց, որ մայրերին հետեցնելը և նրանց վնասակարութիւնը մեղաւորացնելը ձեռնառու չեն:

Գ. Ղազարեանի դատաբանքի մէջ կան բազմաթիւ այլ մասն ու խոշոր սխալներ, որոնց վրա մենք չենք կարող կանգ առնել: Բոլորովին իւզուր պ. Ղազարեանը իրան զլխաւոր ուղեցոյց դնուել է Պատեխին ձեռնարկը և գոյուած է նրան: Աւելի լաւ էր հետեւել արաստահանեան նշանաւոր հեղինակներին, որոնցից ըստ մեծի մասին քաղաքական են անում ողու հեղինակները: Բայց որ զլխաւորն է՝ պ. Ղազարեան չը պէտք է ամենին ձեռք զարկէր մեղաւորականութեան դատաբանքի կազմութեան, որովհետեւ բաւականաչափ հմուտ չէ այդ մեղաւորականութեան մէջ:

Ա. Մ.

Նոր ստացված գրքեր. 1) „Հայ որդերի Բարիքի առաւելում“, Լոնդոն, 1903 թ., 2) „Պալա... ճառերից, արտատպած „Մշակից“, Թիֆլիս, գինն է 3 կոպէկ, 3) „Պոլսոյց գործը“, Մարի Դը-Մոստի-Փոլի, թարգմանեց ն. Տէր-Մանուէլեան, հրատարակեց Զ. Նդիեան, Բագու, գինն է 10 և 4) Mars-ի, „Եփիմէ“ (մոտացում է իշտակարանից) հրատ. 8. Յովսէփեան, վէպիկ. Բագու, գինն է 25 կոպէկ, 5) „Բարբառ“, վէպ Մարիա Նորիկ, թարգմանութիւն Ս. Տէր-Մարգարեան. Պարսկաստան, Թիֆլիս, գինն է 1 ր. 50 և, 6) Отчет Кавказскаго Общества и справоч. Земледельческо-ремесленных колоний и приютов. Тифлисъ, 1903., 7) Թաթուլ Վանահայրի Ոսկեղաւորեան սխալները, Սրբէն Ղազարեանի:

ՆԵՐՈՒՆ ԼՈՒՐԵՆ

Պատեխի տեղեկութիւն է ստացված, որ Ֆինանսների մինիստրը համալրանքով է վերաբերվել ինքնուրու Ադրիանովի միջնորդութեան և համաձայնութիւն է յայտնել տալու նրան արտօնութիւն երկաթուղի շինելու դէպի Կարէթի: Ինքնուրու Ադրիանովի ասելով, ձառապարհի կառուցման համար անհրաժեշտ գրաւադուլը պատրաստ է արդէն: Երկաթուղային գիծը կը սկսվի Նաւթուղ կայարանից, կանցնէ Սաքաթեղջօյ, Սոյանի և Լազարեղի վայրով ու կը վերջանայ Ջաքաթալում: Զանապարհի ամբողջ երկարութիւնը 250 վերստ է: Եթէ երկաթուղու շինութեան կոնցէսսիան առաջիկայ աշնանը հաստատվի Ադրիանովի վրա, աշխատանքները կը սկսվեն ամսիկապէս հաստատմանից յետոյ և կը վերջանան 1904—1905 թ. աշնաններին:

Այն աշակերտների թիւը, որոնք աւարտում են իրանց ուսման ընթացքը Թիֆլիսի քաղաքային տարրական ուսումնարաններում, հասնում է 200-ի:

Թիֆլիս քաղաքի բնակիչներից այս տարի գինւորագրութեան կանչված են 340 հոգի:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը 200,000 ռուբլի է տալիս փորձնական բժշկականութեան ինստիտուտին, որ-

թիւններով, որոնք Գերմանիայէն գրուելով, այս էջերուն մէջ արտատահմանի հայը կը լուսաբանեն Գերմանիոյ Արևելեան քաղաքականութեան հետեւանքները: Երբեք Այլ ևս աշնանքն ալ կըմբռնենք որ Պաղատաի երկաթուղին խնդիրը փոքր Ասիոյ մէջ ստեղծելու վրա է նոր կացութիւն մը գոր պէտք է նկատողութեան առնենք, և ջանանք որքան հնար է շատ օգտուել այն պարագայներին, որոնց յաղթելու անկարող ենք: Անցան ցացին այն օրերը ուր «խորին քաղաքագէտ և մեծ հայրենաւէր» համարուելու համար կը բաւէր վարդապետօրէն պատգամել, «հոն, անդին ապառաժներուն կատարը արծուի բոյնն է դրուած: Աւաղ, հիմալ հոն Գրիւրի թնդանութիւնն ալ դրուած են, և մենք չենք որ զանազ գետեր դած ենք:

Կիլիկիոյ հայերը քանի մը տարիէ, մասնաւոր 98-էն ի վեր է որ շատ փոխուեցան: Հինգ տարի է որ Ջէյթուն ու չըլանայներ կը պատահին դէպքեր որոնք ցոյց կուտան թէ հիմալեան հովին թափանցողները արդարեւ «Ջէյթունի» բարեօրոյց ընկերութեան հիմնադիրները եղած են, եթէ երբեք յաջողին իրենց ծրագիրները գործադրել:

Եւ սակայն սրտերնուս արին չեւթնայ, երբ յիշենք, որ այն լեռներէն ուր շատ չընեն հալ կարճանքը թրքաւորաց զօրանոցը կը գրաւէին՝ այն լեռներէն հիմալ հիւանդանոց կը խնդրեն:

պէս զի վերջինս փորձեր կատարէ Բաղի նո-
րագիւտ նիւթի վերաբերմամբ:

Որովհետեւ երկաթուղային արհեստանոցներ
սովորեալներ խանգարում են այդ արհեստանոց-
ներէ շուրջը բնակվող ազգաբնակչութեան հաս-
գիւտը ուստի հաղորդակցութեան ճանապարհ-
ներէ մինիստրը հնարաւոր համարեց զազարեց-
նել այդ սովորեալները ամեն տեղ:

«Կըթթը» լրագիրը հաղորդում է, որ ռուս
նշանաւոր գրող Տօլստոյ զինակ է Բիւրիւնովի
քաղաքագլխին մի առանձին նամակով և յայտ-
նել իր համակրութիւնը հրէաներին Տօլստոյի
յայտարարութեանը միացել են նաեւ իշխան
Տրուբեցկոյ, Ն. Ստոբոնիկ, պրոֆէսոր Ու-
սով, իշխան Սուլաւսով, Ն. Դավիդով և պրո-
ֆէսոր Վերնադսկի:

Պետերբուրգի հիմնարկութեան 200-ամեայ
յօբանշարը նշանաւոր կացութեանը նպատա-
կով նրա քաղաքային ինքնավարութիւնը, ի
միջի այլոց, որոշեց. 1) Նշանակել 6,000,000
րուբլի՝ չինկու քաղաքային ուսումնարաններ
համար այնքան չէնքեր, որոնց մէջ տեղաւոր-
վին 25,000 երեխաներ: Հիմնել նոյնպէս քա-
ղաքային դպրոցներից մէկի չինկութեան մէջ,
բացի սկզբնական կրթութեան համար կարևոր
դասարաններից, և այլ օգտակար հանրակրթա-
կան հաստատութիւններ: Այս վերջինը կոչել
Պետրոս Մեծի անունով: 2) Իբրև յիշատակ
մայրաքաղաքի 200-ամեայ յօբանշարի սկզբնա-
կան կրթութեան համար թէ քաղաքային տար-
րական և թէ չորս դասարանական ուսումնա-
րաններում չը վերցնել ոչ մի վարձ սկսած
1903—1904 թվականից: 3) Քաղաքային բոլոր
ուսումնարաններում կախել Պետրոս Մեծի
պատկերը: 4) Երեւել մէկ կամ մի քանի հիւան-
դանոցներ ընդհանուր հիւանդութիւնների հա-
մար այն հաշով, որ նրանց մէջ զետեղվելու
մասնակալների թիւը պակաս չը լինի 1000-ից:
5) Միջնորդութիւն յարուցանել կառավարու-
թեան առջ չինկու Սպիտակ-ժովեան իրանցքը
Մենքա լճի և Սպիտակ ժովի մէջ և կոչել այդ
իրանցքը Պետրոս Մեծի անունով: 6) Յանձնել
քաղաքային ուսարկային ներկայացնելու մի
ծրագիր «այլապատճի բօրա» հիմնելու մասին:

ՇՈՒՇՈՒՑԻՑ մեզ գրում են. «Հինգ տարի է,
Ղազանցից եկեղեցու երէցիքիս պաշտօնը
անկենդանի իշխանութեամբ յանձնած է պ.
Մին. Խոնուհիկը: Հաւատարմութեամբ են, որ ա-
մեն տարի նա հարւելում է ժողովրդին իր
հաշիւները ստուգելու, բայց ժողովուրդն ան-
տարբեր է դանդաղում, միայն ստորագրում են
հաշիւի տակ մի քանի հազի, առանց, ի հար-
կէ, հաշուեմատների միջից մի յօդուած ան-
գամ կարդալու... Ժողովուրդը միայն այս տա-
րի պահանջել է օրինաւոր հաշուեմատիւն:
Սպասեմք հաշուեմատիւնն:

ԹԵՕՏՈՒՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Կարգալով
«Մշակութի» № 99-ի ներքին լուրերի մէջ Լօ-
րաձորից, որ կուգին խմբով միջոց մը վնա-
սակալ թրթուրի դէմ, ես խորհուրդ կուտամ
այս կարևոր խնդրի մասին զիմել Խարաւոս-
Բաղար այդեգործական ընկերութեան, որով-
հետեւ հոս անդ Ղրիմ ալ շատ կայ այն վնասա-
կար թրթուրէն: Խարաւոս-Բաղարի այդեգոր-
ծական ընկերութիւնը բաւական օգուտ տուեց
պարտեզ ունեցողներուն, յուսում թէ անոնց ալ
օգտակար կըլլայ:

ՏԵՂ գիւղից (Ձանգեղուրի գաւառ) մեզ գը-
րում են. «Միւս շաբաթ առաջ Հազարու գե-
տը Տեղ գիւղից երկու մարդ՝ Եպանցի Դրանք
գետը ձիով անցնելու միջոցին՝ յանկարծ չա-
փից դուրս յորգանում է գետը և իսկոյն ինքը
դուռ է նրանց. ձիաները ազատվում են, իսկ
զոհերի դիակներն երկու օր գիւղացիները շատ
մանգալուց յետոյ գտնում են գետի ափին ա-
ւարով ծածկված Անձրներին զոհ գնաց և մի
երրորդ մարդ՝ Սարգիս Արուսեանը. սա գիւղի
նշանաւոր անձերից մէկն էր. նա գնացած է
լինում Սազարու գետի միւս ափը տեսնելու
իր ոչխարի հօտը: Սկզբում է յորդառատ անձ-
րը, որ միջոց չէ տալիս նրան ընկնել մօտիկ
թուղթակալ գիւղը՝ իրան ազատելու համար:
Իսկոյն մտնում է մի քարափի տակ պաշտ-
պանելու, ջուրն այնքան բարձրանում է, որ
հասնում է Արուսեանին. փլվում է քարափը,
զոհը մտնում է քարափի տակ և սպանվում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐՈՒՆԵՐԸ ԵՒ ԲԱՐՔՆԵՐԸ

Պարիզում այս տարվայ սկզբին լոյս տեսաւ
վերոյիշեալ վերնագրով մի նոր գիրք (Les
Ecrivains et les Moeurs), որ ընդհանուր ու-
շադրութիւն է գրաւոր Հեղինակն է Հանրի
Բորդո, որի մի վէպը «Հայրենի հողը» (Le Pays
Natal) հայերէն ևս թարգմանվեց անցեալ տա-
րի Իր այդ նոր աշխատութեամբ, Բորդո ոչ
թէ քննում է Քրիստոսի գրողներին, այլ
զբաղվում է այն հարցով, թէ այդ գրողների
արտագրութիւնները ինչ ազդեցութիւն են
գործում հասարակական բարքերի վրա:
Ռուսաց «Вѣстникъ Европы» ամսագիրը
քննադատական մի մեծ յօդուած է նուիրել
Բորդոյի այդ նոր հեղինակութեան: Անուանե-
լով հեղինակին հին բարոյականութեան զա-
տաղով, ամսագիրը իրաւունք է տալիս նրան,
որովհետեւ, առում է, Յրանախաղութիւնը վերջերս
տեսել եկան բաղձալի բարոյախօսներ, որոնք
չեն զբաղվում բարոյականութեան հարցով,
բայց էութեան, չեն հաստատում բարոյակա-
նութեան նոր, աւելի բարդ և աւելի վեհ կրի-
տերիաներ, համապատասխան ժամանակակից
փիլիսոփայական գաղափարներին, այլ մղում
են հասարակութիւնը դէպի անպիսի հայե-
ցակէտ, որի նպատակն է անհատական կենցա-
ղական բարքութիւն, ետաքրական ճգն-
առում: Նրանք յարձակվում են հին, աւանդա-
կան բարոյականութեան վրա, ոչ թէ նրա հա-
մար, որ աւելի բարձր գնան, դէպի բարին,
այլ ընդհակառակը, բարոյական զգացումը բը-
թացնեն կոպիտ նիւթապաշտութեամբ:

«Բոմանի կրիզիսը» (La crise du roman)
գլխի մէջ, հեղինակը հաստատում է այն ան-
հերքելի փաստը, որ Քրիստոսական հասարա-
կութեան մէջ թուլացել է ընթերցասիրու-
թիւնը և նա չէ հետաքրքրվում այլ ևս բեղ-
լետիւրեակայով. այլ ևս զգրեց չեն ծախվում:
Այդ կրիզիսի պատճառը ոչ թէ ընթերցող հա-
ւասարակութիւնն է, այլ գրականութիւնը, որով-
հետեւ նա չէ պատասխանում իրանդիզենցիայի
պահանջներին: Գրքերը այժմ չեն կարդում,
որովհետեւ շատ են դուրս գալիս և հասարա-
կութիւնը չը գիտէ ինչ կարգաւ Վիճակաբա-
կան տեղեկութիւնների համաձայն, Յրանախա-
ղութեան 40,000-ից աւելի գիրք է լոյս
տեսնում օրական միայն 100 րոման է դուրս
գալիս և այդ անագին թուի մէջ ամենամեծ
մասը կազմում են զինդիւստրիական արտա-
դրութիւնները, որոնք գրականական նշանա-
կութիւն չունեն: Սակայն կայ և աւելի լուրջ
ներքին պատճառ, որ հասարակութիւնը սա-
ռել է դէպի րօմանների ընթերցանութիւնը:
Մի մեծ վիճ է կազմվել գրականութեան և
հասարակութեան մէջ և այդ բաժանման մէջ
մեղաւոր է միայն գրականութիւնը: Գրակա-
նութիւնը նոյն իսկ ի դէմս իր լաւագոյն ներ-
կայացուցիչների, չափազանց հեռացել է կենսա-
բից: Գրողները ապրում են մի առանձին, գը-
րոված միջնորդութեամբ, որոնում են արուեստա-
կան զգացողութիւններ, որոնք պակասում են
նրանց սիրտը և միտքը: Կրկնապատկերը, մեծ
մասամբ, չեն նայում կենսի խորը, այլ գրաւ-
վում են քրաքաղի դէպքերով, սակայն ընկ-
նելով նորութեան ետեւից, նրանք հեռանում են
մշտական հոգեբանական ճշմարտութիւնից:
Վէպերը հնանում են նոյնպիսի արտագրութեամբ,
ինչպէս մօզային հագուստները, որովհետեւ նը-
րանց հեղինակները ընկնում են մօզայի ետեւից
զգացողութիւններ չբնանում այն դերձակների նը-
ման, որոնք օտեղծում են հարուստի մօզային
ձև: Բոմանիստները մեծ սկզբափնիկ են և
լուրջ ուշադրութեան չեն անում իրանց նկա-
րագրած զգացողութիւնը և տանջանքները. նրանք
վախենում են բարոյախօսի, չեն կամենում
ուսուցանել, որովհետեւ չեն հաւատում որ և է
բարոյի պտղաբերութեան, ուստի և ժպիտով են
վերաբերվում արտերին, որ նրանք հակամիտ
են ընդունել իբրև թուլութիւններ:

Հ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Neue Freie Presse» լրագրի թղթակիցը
գրում է Պարիզից, թէ իտալական թագաւորը
այստեղ կը համիս յունիսի 4-ին, որտեղ և կը
մնայ չորս օր: Նախագահ Լուիսի փոխարե-
նութեան մասին դեռ ևս ոչինչ յայտնի չէ, ե-
րբեք այն պատճառով, որ դեռ վերջնականապէս
վճարված չէ Լուիսի այցելութեան հարցը Վա-
տիկանին: Ինչպէս հաղորդում են Հոմից
«Berl. Tag.» լրագրին, Վատիկանի չորսնից
բոլոր տեղեկութիւններով, պապը հաստատու-
պէս վճարել է չորսնից ֆրանսական նախա-

գահին, երբ նա փոխարեցնելու կը մայ ի-
տալական թագաւորին Հոմիս:
—Բէլգրադից գրում են «С. П. Вѣд.» լրա-
գրին. «Դոկտոր Վլադիմիր Գեօրգիևիչ, սերբիա-
կան նախկին մինիստր-նախագահը, որ այժմ
գտնվում է Վիեննայում, մի երկար նամակ է
գրել Ալեքսանդր թագաւորին, որի մէջ խոր-
հուրդ է տալիս բաժանվել Դրաւա թագաւորու-
ն և ամուսնանալ Լիպպէ իշխանուհու հետ: Թա-
գաւորն իր կողմից զիմեց հրաւիրեց իր մօտ
արմատական կուսակցութեան պարագլուխներ
Վուկիչին, Պաշիչին և Սիմիչին, որպէս զի նը-
րանց հետ միասին քննադատել իր ամուսնա-
լուծութեան հարցը: Այս քաղաքական գործիչ-
ները խորհուրդ տուին թագաւորին բաժանվել
Դրաւա թագաւորուհուց և ամուսնանալ չինոօգ-
րիական իշխանուհի Կեչիկայի հետ: Ամուսնա-
կան այս կապը կը հեշտացնէր լաւ յարաբե-
րութիւնների վերականգնումը գործը Սերբիայի
և Չերնօգորիայի մէջ և ուրախութեամբ կըն-
դունվող սերբերի կողմից, որոնք մեծ համակ-
րանք են տալիս Չերնօգորիայի թագա-
ւորը, առում են, որպէս է նախ քան որ և է
վերջնական վճիռ կոչացնելը դրա մասին, դի-
մել Պետերբուրգ և Վիեննա:

—«Софійскія Вѣдомости» լրագիրը հաղոր-
դում է «Белградскія Новина»-ի տեղեկու-
թիւնը այն մասին, թէ Բելգրադում իրերի
գրութիւնը վերին տասնիմեկ լուրջ է: Ժողո-
վուրդը դժգոհ է թէ կառավարութեան բռնած
ընթացքից մոկեղծական հարցում և թէ այն
ուղղութիւնից, որ ստացան մակեդոնական
գործերը վերջին ժամանակի Այդ լրագրի աւե-
լով, պատգամաւորների ժողովի անդամ Սա-
կազով Սօֆիայի «България» թատրոնում ա-
նագին բազմութեան առաջ մի երկար քաղա-
քական ճառ արտասանեց, որի մէջ խիստ քրե-
նապատեմեան ենթարկեց իշխան Չերնօգորի
գործունէութեան եղանակը: Չը նայելով այն
յարձակումներին, որ ճառարարը գործում էր
իշխանի վրա, հասարակութիւնը բռնեց կերպով
ծափափարում էր Սակազովին:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

Անա ինչ բանի մասին էինք մենք վիճում:
Թիֆլիսի հասարակական հիմնարկութիւն-
ներից մէկում տեղի էր ունեցել երկու պա-
րտնների մէջ անախորժ ընդհարում: Կայնայնա-
նորով և ձեռով: Դէպքը նոյնութեամբ նկարա-
գրված էր լրագրում:
—Շատ ծանր տպաւորութիւն է գործում
այդ նկարագիրը, յայտնեց մէկը, պէտք էր
ուրիշ կերպարանք տալ գործին:
—Ինչպէս թէ ուրիշ կերպարանք, բորբոքեց
միւսը, միթէ կարելի է կեղծել իրողութիւնը:
Անացե՛ք ինչո՛ւ, հարցնում եմ ձեզ, այն, ինչ
որ գրված է, եղելութիւն է, թէ ոչ:
—Այո եղելութիւն է, պատասխանեց առա-
ջինը:
—Եթէ եղելութիւն է, վրա բերեց միւսը,
ուրեմն նա պէտք է հարազատ կերպով էլ ար-
ձանագրված լինէր, ինչպէս և արված է:
—Այո, այդ այդպէս է, նկատեց առաջինը,
բայց անյարմար է:
Անա վէճը այն հարցի մէջն էր, թէ արդեօք
փաստական ճշդութիւնը և հարազատութիւնը
բաւականաչափ իրաւունք էին տալիս, որ հա-
տարակված լինէր յայտնի դէպքի նկարագրու-
թիւնը:

—Ի հարկէ, իրաւունք են տալիս, պնդում
էր երկրորդ խօսակիցը, իրաւունք են տալիս,
որովհետեւ դէպքը տեղի է ունեցել հասարա-
կական հիմնարկութեան մէջ: Ամենքը խօսում
են այդ դէպքի մասին նրա բոլոր մանրամաս-
նութիւններով, իսկ լրագիրը նոյն արտայայ-
տել է տպված տառերով:
Վէճի մէջ միջամտեցին և միւսները:
Կարծիքները օտարի բաժանվեցին, որովհե-
տեւ իւրաքանչիւրը սկսեց իր զանազան դէպ-
քեր և աշխատանքներ օրինակներով ապացու-
ցանել իր կարծիքի հիմնաւորութիւնը:
—Միթէ կարելի է հրատարակել հայոյնա-
նոր բոլոր կենդանի բառերով, միթէ կարելի
է նկարագրել այնպիսի մանրամասնութիւններ,
որոնք վիրաւորում են մեր աչքը և լսելը:
միթէ թոյլատրելի է պատմել այնպիսի խօ-
սակցութիւններ, որոնց մէջ զրպարտված են
անմեղ անուններ:
Այդպէս բոլորում էին մի քանիօր: Մեծա-
մասնութիւնը սակայն, ինչպէս և պէտք էր
պատեց, միմեան էին այն կարծիքին, թէ չը
պէտք է եղելութիւնը թագցնել և մասնաւոր
խնդարները նրան: Մի պարտն էլ համակրե-
լով մեծամասնութեան կարծիքին, պնդում էր,
որ որոշ դէպքերում պէտք է բացառութիւն-
ներ անել: Շատերը հաւանութիւն տեսին նրա
կարծիքին, սակայն երբ սկսեց նա թուել մի
առ մի բացատրի դէպքերը, այնպիսի մի եր-
կար շարք հանդէս բերեց, որ բոլորովին չու-
րեցրեց իր խօսակցիներին:
—Չե՛ր բացառութիւնները այնքան շատ են,
որ աւելի գերակշիռ են քան ձեռն կանօնը,
նկատեցին նրան:

Դուք ձեռն բացառութիւններով աւելի վնա-
սեցիք մեր հիմնական հայեացքին, քան մեր
հակառակորդները:
—Բացառութիւնները գործ դնելն էլ պէտք է
բացառութիւն լինի, կատակով նկատեց մի
ուրիշը:
—Դուք կարգաւոր արեցիք, միջամտեց խօ-
սակցիներից մէկը, Հայկի թատրոնական յի-
շողութիւնները:
—Ի՞նչ բան:

—Դուք կարգաւոր արեցիք, միջամտեց խօ-
սակցիներից մէկը, Հայկի թատրոնական յի-
շողութիւնները:

—Ի՞նչ բան:
—Հայկի պատմում է, որ երբ Պարիզում
«Opera Comique» թատրոնում առաջին անգամ
բեմ դրին Բիլլիի «Կարմէն» օպերան, հանդի-
սականների մի մասի վրա շատ ծանր էր ազ-
դել օպերայի վերջին տեսարանը: Թատրոնի
գիրկաւորը մի կողմ է կանչում Հայկիին և
խնդրում է, որ նա փոխէ օպերայի վերջը:
«Շատ արագ է վերջը, առարկում է գիրկաւո-
րը, ինչպէս չամուսնացնել հերոսներին: Գոնէ
մի օտիպէ՛ք, որ նրանք միմեանց սպանեն. ես
այդպէս կը բարեփոխէի: Օրինակ Կարմէնը
հէնց որ տեսնում է դաշնուր, պէտք է վախենալ
և իսկոյն ընկնի իր սիրողի գրկից, իսկ
մի քանի ժամանակից յետոյ փախչէ իր
հայրենի լեռները:
—Հետաքրքրական է, լավեցին ձայներ, յետոյ:
—Յետոյ այն է, որ Հայկիին ի հարկէ չէ
համաձայնում և օպերան մնում է անփոփոխ:
Այժմ ես ձեզ հարցնում եմ, նիթէ Հայկիին չէ
համաձայնում հնարած հերոսների արարքները
փոխել, ինչպէս դուք ցանկանում էք, որ ես
իսկական եղելութիւնը ուրիշ կերպարանով
ցույց տամ:

—Ի՞նչ ուրիշ հարց է, առարկեց միւսը, այդ-
տեղ տրիպի, հոգեբանական անախորժ հարց է:
—Իսկ այստեղ իրականութեան...
—Սոսակցութիւնը փոխվեց այն խնդարի-
ւորութիւնին, որոնք տարիներ շարունակ կատար-
վում են որոշ զոյնի հրատարակութիւնների
էջերում զանազան ազգութիւնների և մասնա-
ւորապէս հրէաների վերաբերութեամբ:
—Ամենաառաջինը և ամենատարածուրը այն է,
նկատեց խօսակցիներից մէկը, որ Բիւրիւնով
կատարված յարձակումների մէջ ազդեցիկ և
էական դեր են կատարել կուլտուրական դա-
մի պատկանող անձեր, օրինակ որոշ կրթու-
թիւն ունեցող զանազան պաշտօնական և քա-
ղաքացիներ:

—Տարիներ շարունակ որոշ զոյնի մարդիկ
տարածում էին տեղեկութեան և անհամբերու-
թեան սերմեր ազգութիւններին և հրէաների
վերաբերութեամբ, նկատեց մի ուրիշը: Մի
ժամանակ Գրիտոս կոչումով էր իր հայրե-
նակիցներին, որ նրանք խորութեան են դնում
իրանց ու սատարացնելու մէջ, իսկ այսօր
մենք Գրիտոսի հետնորդներն ենք խորութիւ-
նը դնում եւս մեր և հրէաների մէջ. շատ տե-
ղերից նրանք վախճել են, շատ դուներ փակել
ենք նրանց առաջ. ահա ձեզ նոր օսմարացի-
ներ...
Մենք մտաբերեցինք շատ անախորժ դէպքեր
ժամանակակից իրականութիւնից: Մենք անս-
նում էինք, որ օրիցօր զեռ խաւար է, որ
ժողովուրդը դեռ ենթարկվում է չար ազդե-
ցութիւնների հոսանքին, բայց չէինք յուսա-
հատվում:

—Լոյսը պէտք է յաղթէ, համբերող ոգին
պէտք է ոչնչացնէ ուրիշ և թշնամութեան զգաց-
մունքները ազդերի մէջ:
Այդ հաւատը դեռ կենդանի է:
Վրձին
«ՄԵՄԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱՊՈԹԻՒՆԻՑ
28 մայիսի
Կ. ՊՈԼԻՍ. Նաչեվի բազմաթիւ Զինովիներ
իր պրօգրամը և ընդունվեց բարեպաշտ կեր-
պով: Մինչև որ Բելգրադին կը ձգտէ դէպի
յարաբերութիւնների վերականգնումը Թիւր-
քիայի հետ, միասին կարող է յոյս դնել պե-
տութիւնների աշակցութեան վրա, բայց պե-
տութիւնները կուրակաւապէս կը մերժեն Բել-
գրիային ազդել այնպիսի գործերի վրա,
որոնք բելգրադական իշխանութեան սահման-
ներից դուրս են և վերաբերում են Մակեդո-
նիային:
ՍՈՑԻԱԼ. Մակեդոնացիները պատրաստում են
մեծ միտինգ՝ կառավարութեան ուշադրութիւնը
գործնելու: Նպատակով եւրօպական վիպիւսների
խաղաղ բնակիչների խիստ հալածանքների վրա:
—Փախստականները Բալկանցի և Նէվրիկայից
հաւատարմութեամբ են, որ մի քանի գիւղերը պա-
շտված են զինուորներից, Կոստովարական չը-
ղաններում հաւատարմութեամբ են, որ մայիսի 29-ին
Նաչեվի պաշտօնապէս ներկայացաւ սուլթա-
նին:
ՊՐԷՏՐԻԱ. Տրանսիլաւիան գաղթականու-
թեան նախնադպրուրդը ազատեց բօհեմների մեծ
մասին պատժից զինուորական յանցանքների
համար վերջին պատերազմի ժամանակ:
ՏԵՂԻՒՆԻ. Ֆինլանդիայի մինիստր Մատտի-
լին և ժողովրդական լուսաւորութեան մինիստր
Պօպոլին հրաժարականի խնդիրներ տուեցին
հիւանդութեան պատճառով:
ԲԵՂԳՐԱԴ. Մինիստր նախագահ Տինկար-
Մարկովի օտարաւ Միլոշ Մեծի առաջին ա-
տիմանի շքանշանը:
Կ. ՊՈԼԻՍ. Նաչեվի երկարատեւ խօսակցու-
թիւն ունեցաւ բելգրադական էկզարխի հետ,

Электротехнический Груз. Инд. Т-ва, В.Вавилская ул.